պէս, որպէս գիտէաք զգործս Լատինաց, այժմ ծանիցեն Հայք թէ յի՞նչ պատճառս ոչ ընթերցաւ հրովարտակն 'ի դատարանի·

2°.—Տաճարն Ս. Յարութեան՝ ուր ոչ է լեալ նորոգութիւն, որպէս ասացին Հայք, և ոչ եմք բողոքեալ վասն այնր, և 'ի նամակի Հիւպատոսին չիք յիշատակութիւն։

3°.—Եկեղեցին Բեթղեհէմի հիւսիսային կողմն սեփհական Հայոց, և բաժանորդ Այրն, յորս արդարեւ ոչ եղեւ նորոգութիւն, սակայն Հայք զպատկերս եւ զկանթեղս զորս կախեցին՝ պակասորդ առեն 'ի բաժանորդութենէ, թէպէտ եղեն նոքա 'ի ձեռն Նախկին Դատաւորի և գիտութեամբ այլազգեաց քաղաքիս, այլ ոչ որպէս սեփհական իրաւունք նոցա, զի տհաճութեամբ մեր եւ պաշտպանութեամբ Դատաւորին եղեն. որպէս ծանեաւ յետոյ առանց իրաւանց լինելն, և կոչեալ զերեւելիս քաղաքին կամեցաւ խանգարել, այլ 'ի պատճառս բացակայութեան Քաղաքապետին՝ մնաց այնպէս։

Բանալի Հիւսիսային դրան եկեղեցւոյն էր 'ի ձեռս Յունաց, եւ 'ի ժամանակի ընկերութեան ետ Դատաւորն եւ զմի բանալի Հայոց, և պատուիրեաց այնպէս գործադրել և նորասահման պատկեր և կանթեղ և այլն. եթէ իրաւամբ էր, տուեալ լինէր յայնժամ Հայոց օրինաւոր Հէօճճէթ 'ի դատարանէ, և զի ոչ տուաւ, նշանակէ չունել իրաւունս։ Յետ սահմանելոյ զայսոսիկ՝ ետուն բառնալ նաեւ զվարագոյրն որ 'ի վերայ հիւսիսային դրան Այրին, և զխաչվառս որ 'ի վերայ որմոյն կից նմին, և նորասահման իրքս, որք ասեն Հայք թէ, բաժանորդութիւն մեր է, սուտ է, զի բաժանորդութիւնն եղեւ ١٢٢٨ թուին 'ի ձեռն Նուրի էֆէնտեայ և հաճութեամբ երկուց կողմանց, և տուաւ Հէօճճէթ 'ի Դատարանէ երկոցունցս սակս բառնալոյ զխռովութիւնն։ Ահա այսպէս է եղանակ բաժանորդութեան, թէպէտ Հայք կախեցին զաւելորդ կանթեղս ١٢٣٢ թուին, հակառակ սահմանի բաժանորդութեան, այլ յայնժամ տըւաք բառնալ 'ի ձեռն Դատաւորին։ Եթէ այսպէս է խնդիրն, սոքա ուստի՞ եղեն կատարեալ բաժանորդ, և ստացան զիրաւունս ընկերութեան, մինչդեռ որմքն և կապարապատ ձեղունն հիւսիսայի կողման, մեր են, և այս հաստատեցաւ